# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 16 | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ | դարակներով պահարաններ | ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Պահարանը պատրաստված է 8 մմ հաստությամբ լամինացված E0դասի ΦSU-ից: Չափսերը՝ 800 x 450 x 1800 մմ ( L x Խ x Բ): Պահարանը բաժանված է հատևյալչափսերի(ներսի)՝ 800 x 450 x 450 մմ ( L x Խ x Բ) չորս դարակների, 18 մմ հաստությամբ լամինացված E0դասի ΦSU-ից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պատրաստված դռներով փակվող, որոնցից յուրաքանչյուրը ամրացված է 3-ական ծխնիով: Բոլոր դռները պետք է ունենան օվալաձև բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք):Բոլոր անկյունները լինեն կլորացված կամ անկյուններին ամրացված լինեն պլաստմասե կլորացված հատուկ դետալներ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և E0դասի ՓՏՍ-ի գույնի:Պահարանի կոնստրուկցիան հավաքված է պտուտակներով, փայտե չիվիներով և էմուլսիայով Դռները և կողային մասերը լինեն լաքապատ /տեսակը՝ կիսափայլատ/: Պահարանը պետք է ունենա 50 x 60 x 150 մմ ( Ե x L x Բ)չորս առանձին փայտյա, կամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | փոշեներկված մետաղական ոտքեր։ Ոտքերի տակը հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և E0դասի ФՏՍ-ի գույնի: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով։ Գույնը նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և |

հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք,

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГРОСС ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 16 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։ |